ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Լեդ լույսեր ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/73 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի հունիսի 9-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/73-1 ծածկագրով պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2026 թվականի հուլիսի 2-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Փոփոխության նկարագրություն՝ 2026 թվականի հուլիսի 2-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է Պայմանագրի Հավելված 3-ով հաստատված «Վճարման ժամանակացույց»-ը՝ ըստ 2026 թվականի հուլիսի 2-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված 1-ի:

Փոփոխության հիմնավորում՝ 2026 թվականի հունիսի 9-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/73 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից ապրանքի ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**